

**Առաջին Ֆակտորինգային Ընկերություն
Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ**

Ֆինանսական հաշվետվություններ
և անկախ աուդիտորական եզրակացություն
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

	Էջ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ	1
ԱՆՎԱԽ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի մասին հաշվետվություն 2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	5 6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	
1. Կազմակերպությունը	9
2. Համապատասխանության մասին հայտարարություն	11
3. Գնահատումների եվ դատողությունների օգտագործում	11
4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական հիմնադրույթներ	13
5. Նոր և վերանայված ստանդարտների որդեգրում	28
6. Չուտ տոկոսային եկամուտ	35
7. Շահութահարկ	35
8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37
9. Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	38
10. Հաճախորդներին տրված վարկեր	38
11. Վարկեր և փոխառություններ	38
12. Սեփական կապիտալ	40
13. Առևտրային և կրեդիտորական պարտքեր	40
14. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ	41
15. Պայմանագրային պարտավորություններ	42
16. Ֆինանսական գործիքների իրական արժեքը	42
17. Ռիսկի կառավարում	43

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2020 Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Առաջին Ֆակտորինգային Ընկերություն» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Կազմակերպության բաժնետիրական կապիտալի փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման բաղաբաղանդության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման բաղաբաղանդության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Կազմակերպության ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին, և
- Կազմակերպության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Կազմակերպությունում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Կազմակերպության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Կազմակերպության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Կազմակերպության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2021 թ. հունիսի 29-ին:

Ղեկավարության աշուկոց՝

Լիլիթ Նարաջյան
Գործադիր տնօրեն



Էրման Մանուկյան
Գլխավոր հաշվապահ

Հունիսի 29, 2021 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առաջին Ֆակտորինգային Ընկերություն ՈՒԿ ՓԲԸ բաժնետերերին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Առաջին Ֆակտորինգային Ընկերություն ՈՒԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2020 թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Եթիկայի կանոնագրքի (ՀԵՄՍԽ կանոնագրք) և պահպանել ենք Եթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԵՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Կազմակերպության 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2020 թ. հունիսի 29-ին այդ հաշվետվությունների վերաբերյալ ներկայացրել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՅՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրման ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն,

զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում առևտիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան առևտիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Քնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված առևտիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված Եական անորոշություն, որը կարող է Եական կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է Եական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է առևտիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված առևտիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Քնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք առևտիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև առևտիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:


Արամի Զակոբյան
Գործադիր տնօրեն
Հունիսի 29, 2021 թ.





Արամի Զակոբյան
Առևտիտի տնօրեն

Երևան, Հայաստանի Հանրապետություն
«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ


**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
(հազար ՀՀ դրամով)**

	Ծան.	2020թ. դեկտեմբերի 31	2019թ. դեկտեմբերի 31
ՎԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	331,410	1,277,166
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	9,17	15,120,824	33,374,122
Տրված վարկեր	10,17	23,533,752	22,239,596
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ		4,824	2,450
Հետաձգված հարկային ակտիվներ	7	-	34,089
Այլ ակտիվներ		4,080	174
Ընդամենը ակտիվներ		38,994,890	56,927,597
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	11	6,426,000	25,907,564
Վճարվող շահաբաժին		4,040,549	15,590,666
Ընթացիկ հարկային պարտավորություններ		67,074	24,648
Հետաձգված հարկային պարտավորություններ	7	16,388	-
Այլ պարտավորություններ	13	3,646,746	2,523,062
Ընդամենը պարտավորություններ		14,196,757	44,045,940
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	12	2,676,974	1,277,500
Հավելյալ վճարված կապիտալ		24,297	24,297
Արտարժույթի փոխարկման պահուստ		811,712	1,282,874
Զբաղիված շահույթ		21,285,150	10,296,986
Ընդամենը սեփական կապիտալ		24,798,133	12,881,657
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		38,994,890	56,927,597

Հաստատվել է 2021թ. հունիսի 29-ին՝


Լիլիթ Ղարաջյան
 Գործադիր տնօրեն




Լիլիթ Ղարաջյան
 Գլխավոր հաշվապահ

Հունիսի 29, 2021 թ.
 Երևան, Հայաստանի Հանրապետություն

9-57 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի մասին հաշվետվություն
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով)**

	Ծան.	2020թ.	2019թ.
Տոկոսային եկամուտ	6	15,561,309	18,720,685
Տոկոսային ծախս	6	(1,274,209)	(1,307,434)
Չուտ տոկոսային եկամուտ		14,287,100	17,413,251
Չուտ արտարժույթի (վնաս)/օգուտ		(2,785,244)	70,412
Կոմիսիոն և այլ վճարների գծով ծախսեր		(26,453)	(33,831)
Գործառնական եկամուտ		11,475,403	17,449,832
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքերի և բաժնետերերին տրված վարկերի արժեզրկումից վնաս		(61,044)	(107,125)
Անձնակազմի գծով ծախսեր		(68,758)	(60,515)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր		(67,905)	(39,579)
Շահույթ՝ նախքան շահութահարկով հարկումը		11,277,696	17,242,613
Շահութահարկի գծով ծախս	7	(289,532)	(450,505)
Տարվա շահույթ		10,988,164	16,792,108
Այլ համապարփակ եկամուտ առանց շահութահարկի			
<i>Հողվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվելու որպես շահույթ կամ վնաս</i>			
<i>Փոխարժեքային տարբերություններ փոխանակումից</i>		(471,162)	2,479,046
Տարվա այլ համապարփակ (վնաս)/եկամուտ, առանց շահութահարկի		(471,162)	2,479,046
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		10,517,002	19,271,154

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով)**

Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Հավելյալ վճարված կապիտալ	Արտարժույթի փոխարկման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	240,000	24,297	(1,196,172)	17,504,878	16,573,003
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Տարվա շահույթ	-	-	-	16,792,108	16,792,108
Այլ համապարփակ եկամուտ			2,479,046		2,479,046
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	2,479,046	16,792,108	19,271,154
Սեփականատերերի հետ գործարքներ՝ ուղղակիորեն կապիտալում արտացոլված Նվիրատվություններ					
Թողարկված բաժնետիրական կապիտալ	1,037,500	-	-	-	1,037,500
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(24,000,000)	(24,000,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	1,037,500	-	-	(24,000,000)	(22,962,500)
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,277,500	24,297	1,282,874	10,296,986	12,881,657
Տարվա շահույթ	-	-	-	10,988,164	10,988,164
Այլ համապարփակ տարվա վնաս	-	-	(471,162)	-	(471,162)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	(471,162)	10,988,164	10,517,002
Սեփականատերերի հետ գործարքներ՝ ուղղակիորեն կապիտալում արտացոլված					
Թողարկված բաժնետիրական կապիտալ	1,399,474	-	-	-	1,399,474
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,676,974	24,297	811,712	21,285,150	24,798,133

9-57 Էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով)**

	Ծան.	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տոկոսային մուտքեր		15,561,309	18,720,685
Տոկոսային վճարումներ		(421,595)	(911,194)
Կոմիսիոն և այլ վճարներ		(26,452)	(33,831)
Վճարումներ աշխատակիցներին		(43,857)	(60,515)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի վճարումներ		(10,319)	(37,584)
Նվազում/(աճ) գործառնական ակտիվներում			
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր		12,514,397	(7,721,688)
Բաժնետերերին տրված վարկեր		(5,183,421)	(18,222,267)
Այլ պարտավորություններ		1,354,235	2,872,707
Գործառնական գործունեություններից ստացված/(գործառնական գործունեությունում օգտագործված) զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը		23,744,298	(5,393,687)
Վճարված շահութահարկ		(53,314)	(603,500)
Գործառնական գործունեությունից ստացված/(գործառնական գործունեությունում օգտագործված) դրամական միջոցների հոսքեր		23,690,984	(5,997,187)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		-	(499)
Ներդրումային գործունեությունում օգտագործված դրամական միջոցների հոսքեր		-	(499)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Բաժնետիրական կապիտալի համալրման մուտքեր		1,399,474	1,037,500
Վճարված շահաբաժին		(10,542,176)	(8,297,696)
Այլ փոխառու միջոցներից մուտքեր	11	4,337,000	20,475,302
Այլ փոխառու միջոցների մարումներ	11	(19,773,514)	(8,818,742)
Ֆինանսական գործունեությունից ստացված/ (ֆինանսական գործունեությունում օգտագործված) դրամական միջոցների հոսքեր		(24,579,216)	4,396,364
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)		(888,232)	(1,601,322)
Փոխարժեքի տատանումների ազդեցությունն արտարժույթով պահվող դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(57,524)	200,318
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	8	1,277,166	2,678,170
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	8	331,410	1,277,166

9-57 Էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունը և գործունեությունը

Առաջին ֆակտորինգային ընկերություն Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ն (Կազմակերպություն) ստեղծվել է 2016թ. օգոստոսի 2-ին: Կազմակերպության հիմնական գործունեությունը ֆակտորինգային ծառայությունների մատուցումն է բացառապես ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց: Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից: Կազմակերպությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա:

Կազմակերպության գրանցված հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 69:

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Կազմակերպությունն ամբողջությամբ պատկանում է Ավշուր Յունաևին (28.83%), Վալերիա Յունաևային (28.83%), Իրինա Յունաևային (28.83%), Ալինա Յունաևային (11.52%) և Արմիդիզ ՓԲԸ-ին (2%): Կազմակերպության վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Ավշուր Յունաևը: Կապակցված կողմերի հետ գործարքները մանրամասն նկարագրված են ծանոթագրություն 14-ում:

Կարգավորող միջավայր

Պետական կարգավորող մարմինները վերահսկում են ընկերության գործունեությունը շատ ձևերով և կարող են կանոնավոր ստուգումներ իրականացնել կիրառելի օրենքների, դրույթների և կանոնների պահպանման նկատմամբ: Այս օրենքները, դրույթները և կանոնները ներառում են գործունեության բոլոր ասպեկտները՝ ներառյալ վաճառքի և մարքեթինգի գործունեությունը, առևտրային փորձը, հաճախորդների ակտիվների շրջանառությունը, աշխատակիցների համար շարունակական կրթության պահանջները, փողերի լվացման դեմ պայքարի մեթոդները, «ճանաչիր քո հաճախորդին» քաղաքականությունը, հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները, ինչպես նաև տնօրենների, պաշտոնյաների և աշխատակիցների վարքագծի վերահսկողությունը:

Ռուսաստանի գործարար միջավայր

Չարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Ռուսաստանի Դաշնությունը, ավելի շատ են ենթակա զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրներինը, ներառյալ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերը: Ռուսաստանում բիզնեսին վերաբերող օրենքներն ու կանոնակարգերը շարունակում են արագորեն փոխել հարկային և կարգավորիչ դաշտը և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Ռուսաստանի ապագա տնտեսական ուղղության վրա մեծապես ազդում է կառավարության կողմից ընդունված ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունը՝ իրավական, կարգավորիչ և քաղաքական միջավայրերի զարգացումների հետ միասին:

Քանի որ Ռուսաստանն արտադրում և արտահանում է նավթի և գազի մեծ պաշարներ, նրա տնտեսությունը հատկապես զգայուն է համաշխարհային շուկայում նավթի և գազի գների նկատմամբ: 2020թ. մարտին նավթի գներն ընկել են ավելի քան 40 տոկոսով, ինչը հանգեցրել է հիմնական արժույթների նկատմամբ ռուսական ռուբլու անմիջապես արժեզրկմանը:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

2014թ. սկսած ԱՄՆ-ն ու Եվրամիությունը սահմանել են որոշ պատժամիջոցներ ռուս պաշտոնյաների, գործարարների ու ընկերությունների նկատմամբ: Սա հանգեցրել է ռուսական բիզնեսների՝ միջազգային շուկաներ մուտքի կրճատման:

Հետագա տնտեսական և քաղաքական իրադարձությունների ազդեցությունը Կազմակերպության ապագա գործառնությունների և ֆինանսական վիճակի վրա կարող է զգալի լինել:

Հայաստանի գործարար միջավայրը

Չարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթակա զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրներինը, ներառյալ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերը: Հայաստանում բիզնեսին վերաբերող օրենքներն ու կանոնակարգերը շարունակում են արագորեն փոխել հարկային և կարգավորիչ դաշտը և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հայաստանի ապագա տնտեսական ուղղության վրա մեծապես ազդում է կառավարության կողմից ընդունված ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունը՝ իրավական, կարգավորիչ և քաղաքական միջավայրերի զարգացումների հետ միասին:

Հայաստանը շարունակում է կրել քաղաքական և տնտեսական փոփոխություններ: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանը չունի զարգացած գործարար և կարգավորող ենթակառուցվածք, որը սովորաբար գոյություն ունի ավելի հասուն ազատ շուկայական տնտեսությունում: Բացի այդ, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալը, ինչը կարող է չանդրադառնալ ֆինանսական գործիքների արժեքի վրա: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է, ինչպես նաև կենտրոնացված տնտեսական բազան, տարածաշրջանային անկայունությունը:

Համաշխարհային ֆինանսական համակարգերում առկա ռիսկերը, այդ թվում՝ վարկային շուկաների վիճակի վատթարացումը կարող են դանդաղեցնել կամ խաթարել Հայաստանի տնտեսության զարգացումը, ինչպես նաև բացասաբար անդրադառնալ Ընկերության կապիտալի և դրա հասանելիության, ավելի ընդհանրականորեն՝ գործունեության արդյունքների, ֆինանսական դրության և հեռանկարների վրա: Առավել խիստ զգալի շուկայական սպառնալիքների և դժվարությունների արդյունքում ՀՀ տնտեսությունը, ինչպես նաև Ընկերության գործունեությունը կարող են վատթարանալ:

COVID-19

2020թ. սկզբին Նոր կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) սկսեց արագ տարածվել ամբողջ աշխարհով՝ հանգեցնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2020թ. մարտ ամսին համաճարակային կարգավիճակի մասին հայտարարմանը: Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու համար շատ երկրների կողմից ձեռնարկված պատասխան միջոցները հանգեցրել են մի շարք ընկերությունների համար գործունեությունների Էական խափանումների և Էական ազդեցություն են ունեցել համաշխարհային ֆինանսական շուկաների վրա: Քանի որ իրավիճակն արագ է զարգանում, այն կարող է զգալի ազդեցություն ունենալ մի շարք ոլորտների ընկերությունների գործունեության

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

վրա՝ ներառյալ բայց չսահմանափակված այնպիսի ազդեցություններով, ինչպիսիք են ձեռնարկությունների գործունեությունների խափանումը արտադրությունների խափանման կամ ձեռնարկությունների փակման հետևանքով, մատակարարման շղթայի ընդհատումը, անձնակազմի կարանտինը, պահանջարկի անկումը և ֆինանսավորման հայթայթման հետ կապված բարդությունները: Արդյունքում Կազմակերպությունը կարող է կրել նոր կորոնավիրուսային հիվանդության անհամեմատ զգալի ազդեցությունը համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա վերջինիս ունեցած բացասական ազդեցության հետևանքով:

COVID-19-ի ազդեցությունը Ընկերության բիզնեսի վրա մեծապես կախված է համաշխարհային և հայկական տնտեսության համար համաճարակի հետևանքների տևողությունից և տարածվածությունից: 2020թ. կեսերին-վերջին կառավարությունը թուլացրել է տնտեսական որոշ սահմանափակումներ և գործարար միջավայրի սահմանափակումներ՝ հաշվի առնելով համաճարակի տարածման ուղին, սակայն դրանց մասշտաբները կարող են փոփոխվել՝ ի պատասխան ապագայում համաճարակի անորոշ զարգացմանը:

Քաղաքական անկայունությունը և ռազմական գործողությունները տարածաշրջանում

2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտությունը սրվեց հրադադարի ռեժիմի խախտմամբ, որը վերականգնվեց 2020թ. նոյեմբերի 10-ին կողմերի միջև ստորագրված հայտարարությամբ: Այդ ժամանակից ի վեր Հայաստանը քաղաքական և տնտեսական ցնցումներ է ապրում: Հայտարարության արդյունքների դեմ մի շարք բողոքներ հանգեցրել են արտահերթ խորհրդարանական ընտրությունների, որոնք տեղի են ունեցել 2021թ. հունիսի 20-ին:

Իրավիճակի հետագա զարգացումը կարող է Եսկան ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության, ֆինանսական վիճակի և ապագա գործունեության արդյունքների վրա, ինչը դժվար է կանխատեսել՝ հաշվի առնելով քաղաքական անկայունության հետ կապված անորոշության աստիճանը:

2. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

3. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

վապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարված դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում.

- չափանիշների սահմանում որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր:

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորստի գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը,
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

4. ՀԱՇՎԱՊԱՀՎԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Պատրաստման հիմունքներ

Կազմակերպությունն իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն: Կազմակերպությունն իրականացրել է ճշգրտումներ և վերադասակարգումներ սույն ֆինանսական հաշվետվությունների՝ ՖՀՄՍ համաձայն պատրաստման և ներկայացման նպատակով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիման վրա՝ բացառությամբ ստորև բնութագրվածից: Սկզբնական արժեքը, որպես կանոն, հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց ստացված վարձատրության իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Կազմակերպությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցներն այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Սույն ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ լիզինգային գործարքների, որը որոշվում է ՀՀՄՍ 17 և ՖՀՄՍ 16 շրջանակներում, և իրական արժեքին որոշակի նմանություն ունեցող գնահատականները, որոնք իրական արժեք չեն հանդիսանում, ինչպիսիք են՝ իրացման զուտ արժեքը՝ ՀՀՄՍ 2-ի շրջանակներում, կամ օգտագործման արժեքը՝ ՀՀՄՍ 36-ի շրջանակներում:

Ի լրումն, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում ելակետային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված գները (չճշգրտված), որոնք կազմակերպությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի ելակետային տվյալներն իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ակտիվների կամ պարտավորությունների գծով ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են:
- Մակարդակ 3-ի ելակետային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտելի ելակետային տվյալները:

Ընկերությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները հաշվետու ամսաթվից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և հաշվետու ամսաթվից հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են ծան. 18-ում:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Կազմակերպությունն իրականացնում է իր գործունեությունը («գործառնական արժույթ»): Ռուսական ռուբլին Ռուսաստանի Դաշնությունում գործող արժույթն է և Կազմակերպության գործառնական արժույթը: Այս ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար ղեկավարությունը որոշել է որպես ներկայացման արժույթ օգտագործել ՀՀ դրամը (դրամ):

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված ակտիվները և պարտավորությունները դրամի փոխանակելու համար կիրառվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխանակման փոխարժեքը: Եկամուտների, ծախսերի և սեփական կապիտալի բոլոր հոդվածները փոխանակվում են գործարքների ամսաթվերի դրությամբ գործող փոխանակման փոխարժեքներով: Փոխանակման արդյունքում առաջացող տարբերությունները գրանցվում են կուտակված փոխարժեքային տարբերությունների պահուստում:

Բոլոր ֆինանսական տվյալները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Ռուսական ռուբլով արտահայտված գումարների ցանկացած փոխարկումը դրամի չափով է դիտվի որպես հաստատում առ այն, որ ռուսական ռուբլով արտահայտված գումարները կարող էին, կարող են տվյալ պահին կամ ապագայում փոխարկվել դրամի նշված կամ որևէ այլ փոխարժեքով:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, բացի այն դեպքերից, երբ դա պահանջվում կամ թույլատրվում է որևէ ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակորեն բացահայտված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնադրույթները ներկայացված են ստորև: Սույն հաշվետվությունում ներկայացված հաշվապահական քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Ընկերության գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

պարտավորությունները վերափոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում գործառնական արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույթի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված, գործառնական արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Պատմական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջացման ամսում:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներառվում են զուտ հիմունքով՝ որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից՝ արդյոք արտարժույթի շարժերը զուտ օգուտի կամ զուտ վնասի դիրքում են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջի դրությամբ հետևյալն են՝

	Միջին փոխարժեք		Սկիզբ փոխարժեք	
	2020թ.	2019թ.	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Ռուբլի/1 ՀՀ դրամ	0.15	0.13	0.14	0.13

Տոկոսային եկամուտ

Արդյունավետ տոկոսադրույթ

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույթը այն դրույթն է, որը ճշգրիտ զեղչում է ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ մուտքերը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ձեռք բերված կամ ի սկզբանե պարտքային առումով արժեզրկված ակտիվներից բացի ֆինանսական գործիքների մասով արդյունավետ տոկոսադրույթի հաշվարկման ժամանակ Կազմակերպությունը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի պայմանագրային բոլոր պայմանները, սակայն ոչ ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ ի սկզբանե պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար վարկի գծով ճշգրտվող արդյունավետ տոկոսադրույթը հաշվարկվում է ապագա դրամական հոսքերի, այդ թվում՝ ակնկալվող պարտքային կորուստների միջոցով:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքների ծախսերը, վարձավճարները, ինչպես նաև միջնորդավճարները և վճարված կամ ստացված միավորները, որոնք հանդիսանում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքների ծախսերը ներառում են լրացուցիչ ծախսեր, որոնք ուղղակիորեն կապված են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերման կամ թողարկման հետ:

Ամորտիզացված և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման ժամանակ՝ առանց մայր գումարի մարումների, գումարած կամ հանած կուտակված ամորտիզացիան՝ օգտագործելով այդ սկզբնական գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ցանկացած ակնկալվող պարտքային կորստի պահուստի համար:

Ամորտիզացված ինքնարժեքով չափված «Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը» ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է մինչ ակնկալվող պարտքային կորստի պահուստի ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման ժամանակ: Արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով չի արժեզրկվել) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող տոկոսադրույքով գործիքների գծով դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխություններն արտացոլելու համար:

Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջավորման հետ կապված ճշգրտումների մասով այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է հեջի գծով ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումների համար՝ հեջի ճշգրտման ամորտիզացիան սկսվելու ամսաթվին:

Սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ արդյունավետ տոկոսադրույքի կիրառման միջոցով:

Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Ֆինանսական ակտիվների համար, որոնք պարտքային առումով արժեզրկվել են սկզբնական ճանաչման ժամանակ, տոկոսային եկամուտը հաշվարկվում է վարկի համար ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի կիրառման միջոցով՝ ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի վերադարձվում համախառն հիմունքներով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը մեծանում է:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտում ներկայացված տոկոսային եկամտի հաշվարկը՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, ներառում է ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական ակտիվների տոկոսը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտում ներկայացված տոկոսային ծախսը՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, ներառում է ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական պարտավորությունները:

Վճարներ և միջնորդավճարներ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մաս կազմող կոմիսիոն եկամուտները և ծախսերը ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի մեջ:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղ աբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Կազմակերպությունը նախ կիրառում է ՖՀՄՍ 9՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Այլ վճարներ և միջնորդավճարներ հիմնականում վերաբերում են գործարքների և սպասարկման վճարներին, որոնք արտացոլվում են ծախսերի կազմում ծառայությունների ստացման ժամանակ:

Հարկում

Շահութահարկը ներառում է ընթացիկ և հետաձգված հարկեր: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն վերաբերում է այլ համապարփակ եկամտի տարրերին կամ ուղղակիորեն կապիտալի կազմում ճանաչված բաժնետերերի հետ գործառնություններին, և այդ դեպքում ճանաչվում է այլ համապարփակ եկամտի կազմում կամ ուղղակիորեն սեփական կապիտալի կազմում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկային ծախսերը տարվա համար հարկվող եկամտից վճարման ենթակա ակնկալվող հարկն է՝ օգտագործելով հաշվետու ամսաթվի համար գործող հարկային դրույքաչափերը և նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի ցանկացած

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Ճշգրտումը: Ընթացիկ հարկը, որը ենթակա է վճարման, ներառում է նաև շահաբաժինների հետ կապված ցանկացած հարկային պարտավորություն:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակով ակտիվների և պարտավորությունների և հարկման նպատակով հաշվեկշռային հաշիվների ժամանակավոր տարբերությունների մասով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որոնք չեն ազդում ոչ հաշվապահական, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկը հաշվարկվում է այն հարկային դրույթաչափերով, որոնք ակնկալվում է կիրառել ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ դրանք հակադարձում են հիմնվելով այն օրենքների վրա, որոնք ընդունվել են մտել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե առկա է ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների հաշվանցման իրավաբանորեն ամրագրված իրավունք, դրանք վերաբերում են նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող կազմակերպությունից կամ տարբեր հարկային կազմակերպություններից գանձվող շահութահարկերին, բայց նրանք մտադիր են կարգավորել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ դրանց հարկային ակտիվներն ու պարտավորությունները կիրականացվեն միաժամանակ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով որ հավանական է ստանալու ապագա հարկվող շահույթ, որի դեմ կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունների, չօգտագործված հարկային վնասները և վարկե: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հասանելի կլինի հարկվող շահույթը, որի նկատմամբ կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

Ֆինանսական գործիքներ

Վերադասակարգում

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով, համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվը գնահատվում է ամորտիզացված արժեքով, եթե այն համապատասխանում է հետևյալ պայմաններին և դասակարգված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահպանել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի ստացման համար, և

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական միջոցների հոսքեր նշված ամսաթվերին, որոնք ներկայացնում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի դիմաց տոկոսագումարների վճարումները:
- Պարտքային գործիքը գնահատվում է համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով այն դեպքում, երբ այն համապատասխանում է հետևյալ պայմաններին և չի դասակարգվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող`
- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակը ձեռք է բերվում ինչպես պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքի հաշվին, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական միջոցների հոսքեր նշված ամսաթվերին, որոնք ներկայացնում են բացառապես հիմնական միայն մայր գումարի և չմարված մայր գումարի դիմաց տոկոսագումարների վճարումները:

Համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների համար շահույթն ու վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ինչպես նաև ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար`

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ տոկոսային եկամուտ;
- ԱՊԿ և հակադարձումներ; և
- արտարժույթի օգուտներ և վնասներ:

Համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվի ճանաչման դադարեցման դեպքում կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել է այլ համապարփակ եկամտի կազմում, վերադասակարգվում է սեփական կապիտալից որպես շահույթ կամ վնաս:

Բաժնետիրական ներդրման սկզբնական ճանաչման դեպքում, որը չի պահվում առևտրի համար, Կազմակերպությունը կարող է անդառնալիորեն ընտրել իրական արժեքի հետագա փոփոխությունները այլ համապարփակ եկամտի մեջ ներկայացնելու համար: Այս ընտրությունն իրականացվում է ներդրումային հիմունքներով:

Նման բաժնային գործիքների շահույթներն ու վնասները չեն դասակարգվում որպես շահույթ կամ վնաս, և շահույթի կամ վնասի մեջ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, քանի դեռ դրանք հստակ չեն ներկայացնում ներդրման արժեքի մի մասի վերականգնում, որի դեպքում դրանք ճանաչվում են այլ համապարփակ եկամտի մեջ: Այլ համապարփակ եկամտի մեջ ճանաչված կուտակային շահույթներն ու վնասները փոխանցվում են ներդրումների օտարման արդյունքում չբաշխված շահույթներին:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման դեպքում Կազմակերպությունը կարող է մշտական հիմունքներով նախորոշել ֆինանսական ակտիվը, որը հակառակ դեպքում համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները գտնվում են ռեզիդենտ առևտրային բանկերում, ընդ որում միջոցների մնացորդի 94%-ը գտնվում է մեկ ռեզիդենտ առևտրային բանկում (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 98%-ը գտնվում է մեկ ռեզիդենտ առևտրային բանկում):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ոչ մի ակտիվ չի ունեցել ֆինանսական հաստատությունում, որի հաշվեկշիռը գերազանցել է սեփական կապիտալի 10 տոկոսը (2019թ. դեկտեմբերի 31՝ 1,253,250):

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

9. ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԳԾՈՎ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	15,288,249	33,597,524
Արժեզրկման պահուստ	(167,425)	(223,402)
Չուտ դեբիտորական պարտքեր ֆակտորինգի գծով	15,120,824	33,374,122

Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքերը ժամկետանց կամ արժեզրկված չեն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2019թ.՝ զրո):

(ա) Նշանակալի պարտքային ռիսկեր

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի երկու հաճախորդ (2019թ. դեկտեմբերի 31-ին՝ ութ հաճախորդ), որոնց հաշվեկշիռները գերազանցում են սեփական կապիտալի 10 տոկոսը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների համախառն արժեքը կազմում է 7,846,980 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31՝ 29,972,339 հազար ՀՀ դրամ):

10. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Բաժնետերերին տրված վարկեր	23,779,495	22,358,864
Արժեզրկման պահուստ	(245,743)	(119,268)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	23,533,752	22,239,596

Վարկերն պահովված չեն գրավով: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերը ժամկետանց կամ արժեզրկված չեն (2019թ.՝ զրո):

(ա) Նշանակալի պարտքային ռիսկեր

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն չունի փոխառու (2019թ. դեկտեմբերի 31-ին՝ մեկ փոխառու), որոնց հաշվեկշիռները գերազանցում են սեփական կապիտալի 10 տոկոսը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների համախառն արժեքը հավասար է զրոյի (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 22,358,864 հազար ՀՀ դրամ):

11. ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Գրավով չապահովված փոխառություններ		
փոխկապակցված կողմերից	6,404,335	24,444,224
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերերից	21,665	1,463,340
Ընդամենը վարկեր և փոխառություններ	6,426,000	25,907,564

(ա) Պարտքի մարման պայմանները և ժամանակացույցը

Զմարված փոխառությունների պայմանները հետևյալն էին՝

ԱՌԱՋԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳՎՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻԿԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

				2020թ. դեկտեմբերի 31		2019թ. դեկտեմբերի 31	
	Արժույթ	Անվանական տոկոսադրույք	Մարման տարի	Անվանական արժեք	Հաշվեկշռային արժեք	Անվանական արժեք	Հաշվեկշռային արժեք
Գրավով չապահովված փոխառություններ							
փոխկապակցված կողմերից	ռուբլի	10%	Տպահանջ	6,404,335	6,404,335	24,444,224	24,444,224
Գրավով չապահովված փոխառություններ							
փոխկապակցված կողմերից	ռուբլի	0%	Տպահանջ	19,214	19,214	1,460,886	1,460,886
Գրավով չապահովված փոխառություններ							
փոխկապակցված կողմերից	ՀՀ դրամ	0%	Տպահանջ	2,451	2,451	2,454	2,454
				6,426,000	6,426,000	25,907,564	25,907,564

	Վարկեր և փոխառություններ	Լրացուցիչ վճարված կապիտալ
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,907,564	24,297
Ֆինանսական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքերի փոփոխություններ		
Մուտքեր փոխառություններից	4,337,000	-
Փոխառությունների մարում	(19,773,514)	-
Ֆինանսական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքերի ընդամենը փոփոխություններ	(15,436,514)	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը Այլ փոփոխություններ	(4,897,664)	-
<i>Պարտավորությունների մասով</i>		
Տոկոսային ծախս	1,274,209	-
Վճարված տոկոս	(421,595)	-
Ընդամենը պարտավորությունների մասով այլ փոփոխություններ	852,614	-
Ընդամենը սեփական կապիտալի մասով այլ փոփոխություններ	-	-
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,426,000	24,297

	Վարկեր և փոխառություններ	Լրացուցիչ վճարված կապիտալ
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,883,061	24,297
Ֆինանսական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքերի փոփոխություններ		
Մուտքեր փոխառություններից	20,475,302	-
Փոխառությունների մարում	(8,818,806)	-
Ֆինանսական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքերի ընդամենը փոփոխություններ	11,656,496	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը Այլ փոփոխություններ	1,971,767	-
<i>Պարտավորությունների մասով</i>		
Տոկոսային ծախս	1,307,434	-

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Վճարված տոկոս	(911,194)	-
Ընդամենը պարտավորությունների մասով այլ փոփոխություններ	396,240	-
Ընդամենը սեփական կապիտալի մասով այլ փոփոխություններ	-	-
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,907,564	24,297

12. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության գրանցված և վճարված բաժնետիրական կապիտալը կազմել է 2,676,974 հազար ՀՀ դրամ՝ ներկայացված 2,185,285 հազար հատ սովորական բաժնետոմսերով և 491,689 հազար հատ մարման ոչ ենթակա կուտակային արտոնյալ բաժնետոմսերով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,042,857,143 հատ և 234,642,857 հատ, համապատասխանաբար) յուրաքանչյուրը 1 ՀՀ դրամ արժողությամբ (2019թ.՝ 1 դրամ): 2020 թվականի ընթացքում թողարկվել և ամբողջությամբ վճարվել է 1,142,428 հազար սովորական բաժնետոմս և 257,046 հազար մարման ոչ ենթակա կուտակային արտոնյալ բաժնետոմս իրենց անվանական արժեքով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ հայտարարված շահաբաժիններ և իրավունք ունեն մեկ բաժնետոմսի համար քվեարկել: Կազմակերպության բաժնետիրական կապիտալը ներդրվել է հայկական դրամով մասնակիցների կողմից, և նրանք իրավունք ունեն շահաբաժինների և հայկական դրամով ցանկացած կապիտալի բաշխման: 2020թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել (2019թ.՝ 24,000,000 հազար ՀՀ դրամ):

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք չունեն փոխարկման կամ հետգնման, սակայն իրավունք ունեն մեկ բաժնետոմսի համար տարեկան 0,01 ՀՀ դրամի չափով շահաբաժին ստանալ՝ Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Եթե շահաբաժինները չեն վճարվում, արտոնյալ բաժնետոմսերը ձայնի իրավունք ունեն մինչև բաժնետերերի հաջորդ տարեկան ժողովի: Արտոնյալ բաժնետոմսերը նույնպես ունեն ձայնի իրավունք արտոնյալ բաժնետերերի շահերին առնչվող հարցերի վերաբերյալ՝ ներառյալ ընկերության վերակազմակերպումը և լուծարումը:

Լուծարման դեպքում արտոնյալ բաժնետերերը նախ ստանում են ցանկացած հայտարարված չվճարված շահաբաժիններ և արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեք: Այնուհետև, բոլոր բաժնետերերը՝ սովորական և արտոնյալ, հավասարապես ներգրավված են մնացած ակտիվների բաշխման գործում:

13. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Այլ ֆինանսական պարտավորություններ		
Անձնակազմի գծով պարտավորություններ	18,123	13,408
Այլ կրեդիտորական պարտքեր	8,000	5,934
	26,123	19,342
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ		
Ստացված կանխավճարներ	3,618,949	2,502,351
Վճարման ենթակա հարկ՝ բացի շահութահարկից	1,674	1,369
	3,620,623	2,503,720
Ընդամենը այլ պարտավորություններ	3,646,746	2,523,062

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

14. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Կազմակերպության կապակցված կողմերն են՝ վերջնական բաժնետերերը, Կազմակերպության ասոցիացված ընկերության կողմից կառավարվող ֆոնդերը, Կազմակերպության ղեկավարությունը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության վերջնական վերահսկողություն իրականացնող կողմերն են Վալերիա Յունասևան, Իրինա Յունասևան և Ավշոյում Յունասևան:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են՝

	2020 թ. դեկտեմբերի 31	
	Բաժնետերեր և բաժնետերերի ընդհանուր վերահսկող. ներքո գտնվող կազմակերպ.	Առանցքային ղեկավար անձնակազմ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն եկամուտ		
Տոկոսային եկամուտ	264,307	-
Ծախսեր		
Տոկոսային ծախս	1,274,209	-
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	256,825	-
Բաժնետերերին տրված վարկեր	23,533,752	-
Վարկեր և փոխառություններ	6,426,000	-
	2019 թ. դեկտեմբերի 31	
	Բաժնետերեր և բաժնետերերի ընդհանուր վերահսկող. ներքո գտնվող կազմակերպ.	Առանցքային ղեկավար անձնակազմ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն եկամուտ		
Տոկոսային եկամուտ	4,104,979	-
Ծախսեր		
Տոկոսային ծախս	1,307,434	-
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	7,370,777	-
Բաժնետերերին տրված վարկեր	22,239,596	-
Վարկեր և փոխառություններ	25,907,564	-

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Տարվա համար առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը կազմել է 27,747 հազար դրամ (2019 թ.՝ 20,310 հազար դրամ):

15. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավական և հարկային հարցեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը բնութագրվում է հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Ծատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ են ներկայացնում:

Հաճախ հարկային մարմինները պահանջում են լրացուցիչ հարկեր այնպիսի գործարքների և հաշվապահական մեթոդների համար, որոնց գծով պահանջներ չեն ներկայացվել: Արդյունքում կարող են առաջանալ հավելյալ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման անմիջապես նախորդող 3 օրացուցային տարին: Որոշ հանգամանքներում հարկերի ստուգումը կարող է ընդգրկել ավելի վաղ ժամանակաշրջաններ: Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում և պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ղեկավարությունը նաև կարծում է, որ հիմնական պարտավորությունը, որը բխում է Ընկերության դեմ հարուցված դատական հայցերից և բողոքներից, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս հասանելի չեն: Կազմակերպությունը չի նախատեսում իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Քանի դեռ Կազմակերպությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

16. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵԸ

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և բացահայտումները պահանջում են, որ իրական արժեքը որոշվի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: ՖՀՄՍ-ի սահմանմամբ, իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև չափման ամսաթվի դրությամբ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

սովորական գործարքի արդյունքում կատարվող ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս:

Հաշվի առնելով ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթը, ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքին:

17. ՌԻՍԿԻ ԿԱՌՎԱԿՐՈՒՄ

Ընդհանուր նկարագրություն

Կազմակերպության գործունեությանը բնորոշ են մի շարք ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, պարտքային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ ոչ ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական, գործառնական, իրավաբանական և վարկանիշային ռիսկերը: Այս ռիսկերի հայտնաբերումը և կառավարումը կարևորագույն դեր է խաղում Ընկերության հաջողության և ֆինանսական կայունության տեսանկյունից: Այս ծանոթագրությունը ներկայացնում է նշված ռիսկերի հավանականությունը Ընկերության համար, այդ ռիսկերի չափման և կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

Կազմակերպությունն ակտիվ դեր ունի ռիսկերի կառավարման գործընթացում, ինչպես նաև ունի սահմանած քաղաքականություններ և ընթացակարգեր, համաձայն որոնց տարբեր ստորաբաժանումներ և վերահսկողություն իրականացնող միավորներ պատասխանատու են զանազան ռիսկերի հայտնաբերման, չափման և վերահսկողության իրականացման համար: Ռիսկերի կառավարման աշխատանքների վերահսկողությունն իրականացնում է Կազմակերպության գործադիր մարմինը, որը պատասխանատու է ռիսկի գործոնների ուսումնասիրության և վերահսկողության համար, և վարում է ռիսկերի կառավարման քաղաքականության և գործընթացների շարունակական մշակման և բարելավման աշխատանքները: Առանձնահատուկ ռիսկ պարունակող ոլորտներն են՝

- պարտքային և շուկայական ռիսկերը, որոնք առաջանում են որոշակի արժեթղթերի գծով դիրքերի ձեռքբերման հետևանքով,
- տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության ռիսկերը, որոնց գծով առանձնահատուկ ուշադրություն պահանջող ոլորտներն են տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության քաղաքականությունը, ընթացակարգերը և վերահսկողությունները,
- ներդրումների կառավարումը, որտեղ առանձնահատուկ ուշադրություն են պահանջում այն գործողությունները, որտեղ Կազմակերպությունը և նրա պրինցիպալները հանդես են գալիս որպես ներդրումային կառավարիչներ,
- գործառնական ռիսկերը, որտեղ առանձնահատուկ կարևորություն է տրվում ներքին գործընթացների, մարդկային ռեսուրսների և համակարգերի աշխատանքների ոչ պատշաճ կատարմանը կամ խափանմանը կամ արտաքին միջադեպերի կամ հարաբերությունների (մատակարարներ, գործընկերներ) գծով առաջանալիք ռիսկերին:

Ղեկավարության կողմից սահմանված են քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնցով պետք է առաջնորդվեն աշխատակիցները՝ հաճախորդների հետ հարաբերություններում,

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

ինչպես նաև զանազան գործընկերների հետ փոխհարաբերություններ կառուցելու պայմանները: Հաճախորդներին առնչվող քաղաքականություններում անդրադարձ է արված հաճախորդների կողմից Կազմակերպության ֆոնդերում մասնակցության, տվյալների և ֆիզիկական անվտանգության, ոլորտի կանոնակարգերի և Էթիկայի կանոնների պահպանման հարցերին, ինչպես նաև կարգավորվում են աշխատակիցների և խորհրդատուների վարքագծի կանոնները:

Կազմակերպության գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Հետևաբար, չնայած ռիսկային ոլորտների հայտնաբերմանն ուղղված քայլերին, ինչպես նաև ռիսկերի կառավարման քաղաքականություններին և ընթացակարգերին, չի կարելի բացառել, որ Կազմակերպությունը կարող է անկանխատեսելի վնասներ կրել գործառնական և այլ ռիսկերի առաջացման արդյունքում:

ա. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերն այն ռիսկերն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքներից, որոնց հակված է Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ ավարտին: Ֆինանսական ռիսկն իրենից ներկայացնում է շուկայական ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ֆինանսական ռիսկի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է՝ սահմանել ռիսկի սահմանաչափերը, այնուհետև՝ ապահովել, որ ռիսկի հակվածությունը մնա այդ սահմանաչափի շրջանակներում:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկ՝ ԱՊԿ-ից բխող գումարներ

Ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ, որոնք կիրառվում են արժեզրկման գնահատման համար

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Որոշելու համար, արդյոք ֆինանսական գործիքի մասով դեֆոլտի ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, Կազմակերպությունը դիտարկում է ողջամիտ և օժանդակ տեղեկատվություն, որը տեղին և հասանելի է առանց ավելորդ ծախսերի կամ ջանքերի: Սա ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական տեղեկատվություն և վերլուծություն՝ հիմնված Կազմակերպության պատմական փորձի և վարկի գնահատման վրա՝ ներառյալ հեռանկարային տեղեկատվությունը:

Գնահատման նպատակն է որոշել, թե արդյոք պարտքային ռիսկի նշանակալի աճ է տեղի ունեցել հետևյալ համեմատության միջոցով՝

- դեֆոլտի հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ,
- դեֆոլտի հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում ժամանակի տվյալ պահի համար, որը գնահատվել է պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի սկզբնական ճանաչման պահին (ճշգրտված վաղաժամ մարումների

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

ակնկալիքների փոփոխությունների մասով՝ կիրառելի լինելու դեպքում):

Կազմակերպությունն օգտագործում է երեք չափանիշ, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ.

- քանակական թեստ՝ հիմք ընդունելով պարտագանգման հավանականության փոփոխությունը, որը գնատվել է ելնելով «S&P» վարկանիշային գործակալությունների վարկանիշների միգրացիայի մատրիցներից,
- որակական ցուցանիշներ և
- ժամկետանցության 30-օրյա սահմանափակիչ:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվների գծով ռիսկերը ըստ պարտքային ռիսկի դասերի բաշխում է տարբեր տվյալների հիման վրա, որոնք, ինչպես սահմանված է, թույլ են տալիս կանխատեսել դեֆոլտի ռիսկը և կիրառել պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի գնահատումը որոշվում է որակական և քանակական գործոնների օգտագործմամբ, որոնք ցույց են տալիս դեֆոլտի ռիսկը և համապատասխանում են S&P վարկանիշային գործակալության կողմից հրապարակված վարկանիշային գնահատականներին: Այս գործոնները տարբերվում են՝ կախված ռիսկի բնույթից և վարկառուի տեսակից:

Պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիք ստանում է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ սկզբնական ճանաչման պահին՝ վարկառուի վերաբերյալ առկա տեղեկատվության հիման վրա: Պարտքային ռիսկին ենթարկվող գործիքները կանոնավոր կերպով հսկվում են, որի արդյունքում գործիքի պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակը կարող է փոփոխվել: Հսկողության համար որպես կանոն օգտագործվում է տեղեկատվությունը:

- Հաճախորդի փաստաթղթերի, օրինակ՝ ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական հաշվետվությունների, բյուջեների և կանխատեսումների պարբերական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը: Ցուցանիշները, որոնց հատուկ ուշադրություն է դարձվում, ներառում են՝ համախառն շահույթը, ֆինանսական լծակավորման ցուցանիշը, պարտքի սպասարկման գործակիցը, համապատասխանությունը կովենանտներին, կառավարման որակը, վերադաս դեկավար անձնակազմի փոփոխությունները,
- Վարկանիշային գործակալությունների, մամուլի հոդվածների տվյալները, արտաքին վարկանիշների փոփոխությունների մասին տեղեկատվությունը,
- Վարկառուի քաղաքական, օրենսդրական և տեխնոլոգիական միջավայրի կամ նրա գործունեության փաստացի և ակնկալվող նշանակալի փոփոխությունները:

ԴՀ ժամկետային կառուցվածքի ստեղծում

Պարտքային ռիսկի գնահատումները հանդիսանում են կորպորատիվ ռիսկերի համար ԴՀ-ի ժամկետային կառուցվածքի որոշման հիմնական տվյալը: Կազմակերպությունը հավաքում է իր պարտքային ռիսկերով գործունեության արդյունքների և դեֆոլտի վերաբերյալ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

տեղեկատվությունը, որը վերլուծվում է ըստ հաճախորդների տեսակների և արդյունաբերության ճյուղերի: Օգտագործվում է արտաքին վարկանիշային գործակալություններից ձեռք բերված տեղեկատվությունը: Կազմակերպությունը սահմանում է ԴՀ-ի առավելագույն մակարդակը, որը հավասար է այն երկրի ԴՀ վարկանիշին, որտեղ գործում է պայմանագրային կողմը: Արտաքին վարկանիշ չունեցող պայմանագրային կողմերի համար դիտարկվում է երկրի վարկանիշը, որը նվազեցվում է 4 կետով՝ կախված պայանագրային քանակական և որակական բնութագրերից:

Պարտքային ռիսկի նշանակալի աճի որոշում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Պարտքային ռիսկի աճի նշանակալի լինելը որոշելիս դիտարկվում են ֆինանսական գործիքի և վարկառուի բնութագրերը և աշխարհագրական տարածաշրջանը:

Որպես ընդհանուր ցուցանիշ համարվում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկի ենթարկվող գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, եթե Կազմակերպության մոդելավորման քանակական և որակական մեթոդների հիման վրա որոշվում է հետևյալը.

- Կարկառուի պարտքային ռիսկի մակարդակը վատթարացել է 2 նիշով սկզբնական ճանաչումից ի վեր:
- Կարկառուն ունի ավելի քան 30 օր ժամկետանց պարտավորություն:
- Փոխառության պայմանների վերանայում վարկառուի անվճարունակության պատճառով, որը չի հանգեցնում դեֆոլտի:
- Կարկառուն ունի 90 օրից ավել ժամկետանց պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպություններում (անկախ Կազմակերպության նկատմամբ իր պարտականությունների կատարումից):

Կազմակերպությունը պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին վկայող սահմանափակիչ է համարում ակտիվի ավելի քան 30 օր ժամկետանցությունը: Ժամկետանց օրերի քանակը որոշվում է հաշվելով օրերն այն առաջին օրվանից, երբ վճարումն ամբողջությամբ չի ստացվել: Վճարում կատարելու ամսաթվերը որոշվում են առանց հաշվի առնելու արտոնյալ ժամանակահատվածը, որը կարող է տրամադրվել վարկառուին:

Եթե կան ապացույցներ, որ պարտքային ռիսկն այլևս զգալիորեն չի աճում, համեմատած սկզբնական ճանաչման հետ, ապա գործիքի հնարավոր կորուստների պահուստը վերադառնում է գնահատմանը որպես 12-ամսյա ԱՊԿ:

Կազմակերպությունը դիտարկում է պարբերական վերանայումներով պարտքային ռիսկի նշանակալի աճը հայտնաբերելու համար օգտագործվող չափանիշներից արդյունավետությունը՝ հաստատելու համար, որ.

- չափանիշները կարող են բացահայտել պարտքային ռիսկի նշանակալի աճը մինչև դեֆոլտի սկսվելը;
- չափանիշները չեն համապատասխանում ժամանակի այն պահին, երբ ակտիվը դառնում է ժամկետանց 30 օր;
- պարտքային ռիսկի նշանակալի աճի հայտնաբերման և դեֆոլտի միջև միջին ժամանակը ողջամիտ է թվում;

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

- պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները որպես կանոն ուղղակիորեն չեն
- փոխանցվում այն պորտֆելից, որի գծով պահուստը չափվում է 12ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին չափով, պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքների պորտֆել; և
- 12-ամսյա ԱՊԿ (1-ին փուլ) և ամբողջ ժամկետում ԱՊԿ (2-րդ փուլ) միջև անցումից կորստի պահուստի անհիմն փոփոխականություն չկա:

Դեֆոլտի սահմանումը

Կազմակերպությունը կարծում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել դեֆոլտ, եթե՝

- հավանական չէ, որ վարկառուն վճարի Կազմակերպության առջև իր վարկային պարտավորությունները ամբողջությամբ, եթե Կազմակերպությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (եթե առկա է):
- Կազմակերպության հանդեպ վարկառուի մոտ նշանակալի վարկային պարտավորություններից որևէ մեկն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են ֆինանսական գործիքի գծով դեֆոլտ տեղի ունենալը գնահատելու համար, և դրանց նշանակալիությունը կարող են փոխվել ժամանակի ընթացքում կախված հանգամանքների փոփոխությունից:

Ապագայամետ տեղեկատվության ներառում

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվների վերաբերյալ ապագայամետ տեղեկատվությունը չի ներառել հիմնականում դրանց կարճաժամկետի բնույթի պատճառով: Դեկավարությունը գնահատում է ապագայամետ տեղեկատվության ներառման ազդեցությունը Եական չէ:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկերի վերաբերյալ բացահայտումները բաղկացած են երկու բաժիններից՝ կախված այն բանից, արդյոք համապատասխան ֆինանսական գործիքը ենթակա է ըստ ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկման, թե ոչ:

ՖՀՄՍ 9 արժեզրկման պահանջներին ենթակա ֆինանսական ակտիվներ

ՖՀՄՍ 9-ի շրջանակներում ակնկալվող պարտքային կորուստների մոդելի պահանջներին ենթակա Կազմակերպության ֆինանսական ակտիվներն են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր, բաժնետերերին տրված վարկերը և այլ ակտիվները: 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման գծով պահուստի համադրումը հետևյալն է՝

	Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	Բաժնետերերին տրված վարկեր	Ընդամենը
Արժեզրկման կորուստների գծով պահուստ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	125,031	110,514	235,545
Արժեզրկման գծով պահուստի զուտ ծախս	98,371	8,754	107,125
Արժեզրկման կորուստների գծով պահուստ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	223,402	119,268	342,670
Արժեզրկման գծով պահուստի զուտ (վերականգնում)/ծախս	(55,977)	126,475	70,498
Արժեզրկման կորուստների գծով պահուստ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	167,425	245,743	413,168

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	2020թ.		2019թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	223,402	223,402	125,031	125,031
Անցում Փուլ 1	-	-	-	-
Անցում Փուլ 2	-	-	-	-
Անցում Փուլ 3	-	-	-	-
Ամբողջությամբ կամ մասամբ մարված ֆինանսական ակտիվներ	(222,762)	(222,762)	(124,575)	(124,575)
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	166,785	166,785	222,946	222,946
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	167,425	167,425	223,402	223,402

Բաժնետերերին տրված վարկեր	2020թ.		2019թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	119,268	119,268	110,514	110,514
Անցում Փուլ 1	-	-	-	-
Անցում Փուլ 2	-	-	-	-
Անցում Փուլ 3	-	-	-	-
Ամբողջությամբ կամ մասամբ մարված ֆինանսական ակտիվներ	(42,042)	(42,042)	(104,749)	(104,749)
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	168,517	168,517	113,503	113,503
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	245,743	245,743	119,268	119,268

Ոչ մի ակտիվ չի համարվում արժեզրկված և այս ժամանակաշրջանում համապատասխան գումարներ դուրս չեն գրվել:

Կազմակերպությունն ընդունել է ՖՀՄՍ 9 ԱԴԿ մոդելի պարզեցված մոտեցում: Սույն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված կորուստների գծով պահուստը հիմնված է 12-ամսյա ԱԴԿ-ի վրա՝ օգտագործելով Moody's միջազգային վարկանիշային գործակալության կողմից որոշված դեֆոլտի հավանականության ցուցանիշը՝ հիմք ընդունելով, առկայության դեպքում, գործընկերոջ վարկանիշը, որոշված Moody's միջազգային վարկանիշային գործակալության կողմից, և երկրի վարկանիշը՝ գործընկերոջ վարկանիշի բացակայության դեպքում:

Պարտքային ռիսկը կորստի ռիսկն է, որ կարող է առաջանալ փոխառուի, թողարկողի կամ պայմանագրային կողմի՝ պայմանավորվածության համաձայն ֆինանսական պարտավորությունները կատարելու կարողության վատթարացման արդյունքում:

Կազմակերպությունը կրում է պարտքային ռիսկ առաջին հերթին ֆակտորինգային գործունեության, տրված վարկերի և բանկերում մնացորդների գծով: Կազմակերպությունը փորձում է կառավարել իր պարտքային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն հաճախորդներ և գործընկերներ ընտրելիս:

Կազմակերպությունը պատասխանատու է պարտքային ռիսկի վերահսկողության համար և պատասխանատու է Կազմակերպության պարտքային ռիսկի կառավարման համար, այդ թվում՝ պարտքային քաղաքականության ձևակերպում, գրավի պահանջների բավարարում, վարկերի

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

գնահատում, պարտքային ռիսկի ուսումնասիրություն և գնահատում, պայմանագրային կողմերի գծով, ինչպես նաև ըստ թողարկողի, վարկանիշի միջակայքերի, շուկայի իրացվելիության և երկրի գծով կուտակումների սահմանափակում: Դեկավարությունը չունի ներքին վարկանշման համակարգ և պարտքային ռիսկը կառավարելու նպատակով կանոնավորապես գնահատում է ակտիվների որակը, սահմանում է իր ռիսկի «ախորժակը»՝ կիրառելով, ի թիվս այլ միջոցների, սահմանափակումների քաղաքականություն, խոշոր գործարքների գծով սահմանելով հաստատումների մեխանիզմ:

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվների վարկային ռիսկի ենթարկվածությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31	Երկիր	Վարկանիշ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	331,410	1,277,166	Հայաստան	Չվարկանշված
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտքեր	15,120,824	33,374,123	Ռուսաստան	Չվարկանշված
Բաժնետերերին տրված վարկեր	23,533,752	22,239,596	Ռուսաստան	Չվարկանշված
	38,985,986	56,890,885		

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ՀՀ և ՌԴ տարածքում գտնվող գործարքային կողմերի հետ են:

2020 թվականին Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական հուզումներ: Դրանց, ինչպես նաև քաղաքական և տնտեսական կայունացումը մեծապես կախված են ՀՀ կառավարության ծրագրից և մի շարք այլ գործոններից: Հետագա քաղաքական և տնտեսական զարգացումների ազդեցությունը Կազմակերպության հաճախորդների, ակտիվների և գործընկերների վրա դժվար է կանխատեսել: Կազմակերպության ակտիվների վրա բացասաբար կարող են անդրադառնալ վարկային շուկայի վատթարացումը, կարճաժամկետ տոկոսադրույքերի նվազումները, ինչպես նաև արժեթղթերի գնահատման նվազեցումները:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, երբ կազմակերպությունը դժվարություններ է ունենում ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս: Ընկերությունը միջոցները պահում է ավանդների տեսքով, որպեսզի կարողանա արագ և հեշտ արձագանքել իրացվելիության անկանխատեսելի պահանջներին: Այս գործոնների համակցությունը կարող է առաջացնել Եական տատանումներ որոշակի ժամկետներում կանխիկի դիրքի գծով:

Ընկերության քաղաքականությունը իրացվելիության կառավարմանը կայանում է նրանում, որպեսզի ապահովվի բավարար իրացվելիություն պարտավորությունների կատարման համար, թե՛ ընթացիկ, և թե՛ սթրեսային իրավիճակներում:

Ստորև ներկայացված աղյուսակում 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆինանսական ակտիվները և

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

պարտավորությունները ներկայացվում են զեղչված հիմունքով և հիմնված են դրանց պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի վրա: Ըստ ղեկավարության գնահատումների, որոշակի ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող դրամական հոսքերը տարբերվելու են դրանց պայմանագրով նախատեսված պայմաններից, ելնելով նրանից, որ ղեկավարությունը կարող է իր հայեցողությամբ տնօրինել դրամական հոսքերը, կամ նախորդ փորձը ցույց է տալիս, որ դրամական հոսքերը կարող են տարբերվել պայմանագրով նախատեսված պայմաններից: Ղեկավարության գնահատմամբ, չզեղչված դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների դեպքում մոտ են ստորև աղյուսակում ներկայացված տեղեկատվությանը և առանձին չեն ներկայացվում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունը՝ ըստ ակնկալվող մարման ժամկետների:

	2020թ. դեկտեմբերի 31						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Ավելի քան 5 տարի	Առանց մարման	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	331,410	-	-	-	-	-	331,410
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	116,177	1,688,174	11,749,270	1,567,204	-	-	15,120,824
Բաժնետերերիև տրված վարկեր	-	-	-	23,533,752	-	-	23,533,752
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	447,587	1,688,174	11,749,270	25,100,956	-	-	38,985,986
Ֆինանսական պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	(6,426,000)	-	-	-	-	-	(6,426,000)
Վճարման ենթակա շահաբաժիններ	(4,040,549)	-	-	-	-	-	(4,040,549)
Այլ պարտավորություններ	(26,123)	-	-	-	-	-	(26,123)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(10,492,672)	-	-	-	-	-	(10,492,672)
Զուտ դիրք	(10,045,085)	1,688,174	11,749,270	25,100,956	-	-	28,493,314

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների

ԱՌԱՋԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳՎՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԿԵՐՍԱԸ ՎԱՐԿՎՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

վերլուծությունը՝ ըստ ակնկալվող մարման ժամկետների:

	2019թ. դեկտեմբերի 31						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Ավելի քան 5 տարի	Առանց մարման	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,277,166	-	-	-	-	-	1,277,166
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	6,834	612,502	30,574,873	2,179,913	-	-	33,374,122
Բաժնետերերի տրված վարկեր	-	22,239,596	-	-	-	-	22,239,596
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,284,000	22,852,098	30,574,873	2,179,913	-	-	56,890,884
Ֆինանսական պարտավոր- ություններ							
Վարկեր և փոխառություններ	(25,907,564)	-	-	-	-	-	(25,907,564)
Վճարման ենթակա շահաբաժիններ ԱԼ	(15,590,666)	-	-	-	-	-	(15,590,666)
պարտավորություններ	(19,342)	-	-	-	-	-	(19,342)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(41,517,572)	-	-	-	-	-	(41,517,572)
Զուտ դիրք	(40,233,572)	22,852,098	30,574,873	2,179,913	-	-	15,373,312

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայում գործող գների փոփոխությունները, ինչպիսիք են տոկոսադրույքի ռիսկը, արժեթղթերի արժեքի, արտարժույթի փոխարժեքի և վարկային սպրեդերի փոփոխությունները կազդեն Կազմակերպության եկամուտների կամ ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը:

Տոկոսադրույքի ռիսկ

Կազմակերպությանը բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Կազմակերպության տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Կազմակերպության քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են ֆինանսական պարտավորությունների մարման ակնկալվող ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

Տոկոսային եկամտի վրա կարող են ազդեցություն ունենալ այդ ակտիվների ծավալի և համադրության, ինչպես նաև տոկոսադրույքների և պորտֆելի կառավարման ռազմավարության տատանումները: Ստորև ներկայացված է 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսադրույքի միջակայքի դիրքը ֆինանսական գործիքների գծով:

	2020թ. դեկտեմբերի 31						
	Հաշվե- կշռային արժեք	Մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսա- կիր
Ֆինանսական ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	331,410	331,410	-	-	-	-	-
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք Բաժնետերերին տրված վարկեր	15,120,824	116,177	1,688,174	11,749,270	1,567,203	-	-
	23,533,752	-	-	-	-	-	23,533,752
	38,985,986	447,587	1,688,174	11,749,270	1,567,203	-	23,533,752
Ֆինանսական պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	(6,426,000)	(6,404,335)	-	-	-	-	(21,665)
Վճարման ենթակա շահաբաժիններ	(4,040,549)	-	-	-	-	-	(4,040,549)
Այլ պարտավորություններ	(26,123)	-	-	-	-	-	(26,123)
	(10,492,672)	(6,404,335)	-	-	-	-	(4,088,337)

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

28,493,314	(5,956,748)	1,688,174	11,749,270	1,567,203	-	19,445,415
------------	-------------	-----------	------------	-----------	---	------------

2019թ. դեկտեմբերի 31

**Ֆինանսական
ակտիվներ**

Դրամական միջոցներ և
դրանց համարժեքներ
Ֆակտորինգի գծով
դեբիտորական պարտք
Բաժնետերերին տրված
վարկեր

Հաշվե- կշռային արժեք	Մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսա- կիր
1,277,166	1,253,351	-	-	-	-	23,815
33,374,122	6,834	612,502	30,574,873	2,179,913	-	-
22,239,596	-	-	-	-	-	22,239,596
56,890,884	1,260,185	612,502	30,574,873	2,179,913	-	22,263,411

**Ֆինանսական
պարտավորություններ**

Վարկեր և
փոխառություններ
Վճարման ենթակա
շահաբաժիններ
Ալ պարտավորություններ

(25,907,564)	(24,444,227)	-	-	-	-	(1,463,337)
(15,590,666)	-	-	-	-	-	(15,590,666)
(19,342)	-	-	-	-	-	(19,342)
(41,517,572)	(24,444,227)	-	-	-	-	(17,073,345)
15,373,312	(23,184,042)	612,502	30,574,873	2,179,913	-	5,190,066

Քանի որ Կազմակերպության ֆինանսական գործիքների գծով դրամական միջոցների հոսքերից որևէ մեկը 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված չէ լողացող տոկոսադրույքի հետ, Կազմակերպությունը չի պատրաստում և ներկայացնում տոկոսադրույքի ռիսկի զգայունության վերլուծություն, քանի որ այս առումով առկա չէ ազդեցություն շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են միջին տոկոսադրույքները տոկոսակիր գործիքների գծով՝ հիմք ընդունելով Կազմակերպության վերանայած հաշվետվությունները: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների ժամկետայնության վրա հիմնված դրանց եկամտաբերության մոտավոր պատկերը:

Տարեկան % արտահայտությամբ	2020 թ. դեկտեմբերի 31		2019 թ. դեկտեմբերի 31	
	ՀՀ դրամ	Ռուբլի	ՀՀ դրամ	Ռուբլի
Բանկային հաշիվներ	0.67%	1.00%	0.79%	1.00%
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	-	30.37%	-	33.32%
Վարկեր և փոխառություններ	-	9.22%	-	10.00%

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

պարտավորությունների գծով, որոնք Կազմակերպության գործառնական արժույթով չեն պահվում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2020թ. դեկտեմբերի 31		
	ՀՀ դրամ	Ռուբլի	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,050	330,359	331,409
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	-	15,120,824	15,120,824
Բաժնետերերին տրված վարկեր	-	23,533,752	23,533,752
Ընդամենը	1,050	38,984,935	38,985,985
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	2,454	6,423,546	6,426,000
Վճարման ենթակա շահաբաժիններ	4,040,549	-	4,040,549
Այլ կրեդիտորական պարտքեր	26,123	-	26,123
Ընդամենը	4,069,126	6,423,546	10,492,672
Չուտ դիրք	(4,068,075)	32,561,389	28,493,314
	2019թ. դեկտեմբերի 31		
	ՀՀ դրամ	Ռուբլի	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	718	1,276,448	1,277,166
Ֆակտորինգի գծով դեբիտորական պարտք	-	33,374,123	33,374,123
Բաժնետերերին տրված վարկեր	-	22,239,596	22,239,596
Ընդամենը	718	56,890,167	56,890,885
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	2,454	25,905,110	25,907,564
Վճարման ենթակա շահաբաժիններ	15,590,666	-	15,590,666
Այլ կրեդիտորական պարտքեր	19,342	-	19,342
Ընդամենը	15,612,462	25,905,110	41,517,572
Չուտ դիրք	(15,611,744)	30,985,057	15,373,313

2020 թ. դեկտեմբերի 31-ին ռուբլու արժևորումը կամ արժեզրկումը ՀՀ դրամի նկատմամբ, ինչպես ներկայացված է ստորև, կհանգեցնել զուտ ակտիվների (նվազման) աճի և շահույթի կամ վնասի, ստորև նշված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթի փոխարժեքի տատանումների վրա, որոնք ղեկավարության ողջամիտ գնահատմամբ համարվել են հնարավոր հաշվետու ամսաթվի դրությամբ: Վերլուծությունը ենթադրում է, որ բոլոր մնացած փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, մնում են անփոփոխ:

	Շահույթ կամ վնաս/ սեփական կապիտալ	
	Արժեզրկում	Արժևորում
20% ՀՀ դրամի շարժ ռուբլու նկատմամբ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	813,550	(813,550)

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

3,122,766

(3,122,766)

Գործառնական ռիսկ

Կազմակերպության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը, որպեսզի հավասարակշռի ֆինանսական կորուստները, ինչպես նաև իր հեղինակությանը հասցվող վնասը: Գործառնական ռիսկի շուրջ զարգացման և վերահսկողության ձևավորման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Կազմակերպության գործադիր մարմինը: Այս ռիսկը մեղմելու համար շարունակաբար վերահսկվում են ներքին գործընթացները, ռիսկ պարունակող գործընթացները հնարավորինս ավտոմատացվում են, ի լրումն, օգտագործվում են պահուստային տեխնիկական և ծրագրային համակարգեր, տեղեկատվությունը կանոնավորապես արխիվացվում և պահվում է առանձնացված վայրում՝ այն ցանկացած ժամանակ վերականգնելու հնարավորությամբ, մասնավորապես այն դեպքում երբ տեղի է ունենում կարևոր երկկողմ գործընթաց, կամ՝ ստուգումներ և համեմատումներ իրականացնելու նպատակով:

Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով բաժնետերերի շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ ի թիվս այլ միջոցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սահմանաչափերով: Նախորդ տարվա ընթացքում Ընկերությունն ապահովել է համապատասխանություն կապիտալի պահանջների հետ կապված բոլոր արտաքին պայմաններին: